

1587ա

ՄԿԴ

1587

# ՀՐԱՀԱՆԳ

12391

Գ Ը Ս Ե

## ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՉԱՑ



1587

12391

111

ՔԱՄԱՆԱԿ

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Գ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԵՒ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

1881

Ի վերայ իսկականին ձեռամբ վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց մակաղբի.

Պարթաբրեոյի:

**Հ Ր Ա Հ Ա Ն Գ**

**ՎԱՍՆ ԹԵՄԱԿԱՆ ՎԵՄՏԵՍՉԱՅ**

1. Յիւրաքանչիւր թեմի գտանկցի մի վերատեսուչ, իբրեւ օգնական Առաջնորդի, վասն կառավարելոյ զուսումնական մասն դպրոցաց եւ ուսումնարանաց թեմի:
2. Թեմական վերատեսուչն ստորադրի անընդմիջապէս ընդ իշխանութեամբ Առաջնորդի:
3. Առաջնորդն ընտրէ զթեմական վերատեսուչն եւ առաջարկէ Վեհափառ Կաթողիկոսին ամենայն Հայոց ի հաստատութիւն: Նոյն կարգաւ լինի եւ արձակումն եւ պարգեւատրութիւնըն թեմական վերատեսուչի:

4. Թեմական վերատեսուչն ընտրի յատկապէս յուսումնականացն աւարտելոց զուսմունս իւրեանց ի բարձրագոյն եւ ի միջնակարգ ուսումնարանս Տէրութեան՝ եւ կամ յազգային թեմական Հոգեւոր Իսպանոցս:

5. Թեմական վերատեսուչն ընտրի առաւելապէս ի Հոգեւորականաց՝ իսկ ի կարեւոր դէպս եւ յաշխարհականաց:

6. Ճանապարհածախք թեմական վերատեսչի մատակարարեցցի յուսումնարանաց եւ կամ ըստ նկատողութեան Թեմակալաց ի վիճակային արդեանց:

7. Թեմական վերատեսուչն ունիցի Օգնականս ըստ թուոյՅաջորդութեանց:

8. Թեմական վերատեսչին ստորագրին ազգային ծխական եւ միջնակարգ դպրոցք ըստ ուսումնական եւ ըստ տնտեսական մասին, բաց ի Թեմական Հոգեւոր Իսպանոցէ, յորոյ վերայ հրահե ինքն Առաջնորդն:

9. Թեմական վերատեսուչն յանձին

կալցի զամենայն փոյթ գներքին եւ զարտաքին բարեկարգութեանց եւ յառաջադիմութեանց դպրոցացն ստորագրելոց իշխանութեան իւրում, նոյնպէս եւ զնիւթ. ապա հոյութեանց նոցին:

10. Թեմական վերատեսուչն պարտի ջանալ զի բացցին ծխական դպրոցք ամենայն ուրեք, գոնէ յիւրաքանչիւր գիւղս մէն մի, իսկ ի քաղաքս եւ ի բազմամարդ աւանս երկու եւ աւելի ըստ թուոյ եկեղեցեաց եւ ըստ չափու պիտոյից տեղւոյն:

11. Թեմական վերատեսուչն հաստատէ եւ արձակէ զվարժապետս եւ զմասնաւոր տեսուչս ծխական եւ միջնակարգ դպրոցաց ըստ առաջարկութեան իւրոցն օգնականաց կամ հոգաբարձուաց, իսկ սակս պարգեւատրութեան նոցա առաջարկէ Առաջնորդին:

12. Թեմական վերատեսուչն պարտի յայց ելանել դպրոցաց ամբողջ վիճակին գէթ մի անգամ ի տարւոյ, իսկ օգնա-

կանք նորա բազմիցս ի մասնաւոր շրջա-  
նըս իւրեանց:

13. Թեմական Վերատեսուչն նկա-  
տելով անձամբ անձին զորպիտի եւ իցէ  
անկարգութիւնս ի դպրոցս թէ ըստ  
ուսումնական եւ թէ ըստ տնտեսական  
մասին, կամ ստանալով դտեղեկութիւ-  
նըս յօգնականաց իւրոց, ի վարժապե-  
տաց եւ ի մասնաւոր տեսչաց, ի հոգա-  
բարձուաց եւ կամ ի ծնողաց աշակեր-  
տաց, սակս ինչ ինչ անկարգութեանց,  
փութայ բառնալ եւ հեռացուցանել  
զայնոսիկ առնելով անյապաղ զարժա-  
նաւոր տնօրէնութիւնս:

14. Թեմական Վերատեսուչն քննէ  
զամենայն դանդատս զօգնականաց, ըզ-  
վարժապետաց, դտեսչաց եւ զհոգա-  
բարձութեանց, եւ առնէ զարժանաւոր  
տնօրէնութիւն, իսկ ի ծանրաւշիւ խըն-  
դիրս առաջարկէ զայնոսիկ Առաջնոր-  
դին հանդերձ դատողութեամբ իւրով:

15. Թեմական Վերատեսուչն պար-

տի հոգալ եւ պատրաստել զգիւրմբե-  
նելի դասագիրս եւ հնարել զյարմար  
եղանակս դասաւանդութեանց աշա-  
կերտաց իւրաքանչիւր տեղեաց:

16. Թեմական Վերատեսուչն յօրինէ  
զհրահանգս վասն օգնականաց իւրոց  
եւ առաջարկէ Առաջնորդին ի հաս-  
տատութիւն:

17. Թեմական Վերատեսուչն զննէ եւ  
հաստատէ զհրահանգս յօրինեալս յիւ-  
րոց օգնականաց վասն դպրոցաց շրջա-  
նաց իւրեանց:

18. Թեմական Վերատեսուչն զննէ  
զտարեկան հաշիւս օգնականաց իւ-  
րոց:

19. Թեմական Վերատեսուչն զննէ  
զտարեկան հաշիւս (թէ ըստ տնտեսա-  
կան մասին եւ թէ ըստ ուսումնական)  
իւրաքանչիւր դպրոցի, զորս առաջար-  
կեն նմա վարչութիւնք դպրոցաց ի ձե-  
ռըն օգնականաց նորա կամ ամիջապէս:

20. Թեմական Վերատեսուչն կարէ

զննել զմատեանս հոգաբարձուաց երբ  
եւ կամեոցի:

21. Թեմական վերատեսուչն գումարէ ի տարւոջ երկիցս զմանկավարժական ժողովս յօգնականաց իւրոց:

22. Թեմական վերատեսուչն յամսեանն Փետրուարի սուաջարկէ Առաջնորդին զտարեկան մանրամասն հաշիւս վասն անցեալ ամի:

23. Վիճակաւոր Առաջնորդն զտարեկան հաշիւս Թեմական վերատեսչի հանդերձ իւրովք նկատողութեամբք առաջարկէ Սինօդին Ս. Էջմիածնի ի զննութիւն:

Այս Հրահանդ ունի ենթարկիլ փոփոխութեանց ըստ փորձառութեանցն օգտաւէտ երեւոյց, եւ յաւելուլ կամ կարճել ի սին զյօդուածս համաձայն պահանջից ժամանակին:

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL011019